

տպագրելի է. որ սոյն հատորի երկու մասն ի միասին բաղադրեալ ոչ լինի պակասագոյն քան զառաջին հատորն:

Նա եւ եթէ այսու ամենայնիւ կամիցիս եւ զիմն հարցանել զհարգ, շնորհակալ եմ զՏեառնէ, որ տակաւին պահեալ է կենդանի զիս, որ անարժան իսկ եմ անհնիցս՝ նա եւ զըսպէ մի կենաց ժառանգել: Եւ աշխատիմ եւս առ ի յարմարագրել եւ սրբագրել զԿենդանեաց գրքն՝ ըստ լատինականին իւրոյ. որոյ տպագրութիւնն արդէն մերձ է առ ի հասանիլ ի կէսն: Նոյնպէս նա եւ աշխատիմ վասն Զերմեանդ Կենաց կոչեցեալ գրքի միոյ. զորոց եթէ կամիցիս տեսանել զկերպն, զգիրն եւ զյարմարագրութիւնն, կարես ի յեւանելդ ի շորշն հանդիպիլ ի յօտայն տիրացու Հայրապետին. եւ անդ տեսանել. զի ի Կենդանեաց գրքն երեք թուղթ. եւ ի Զերմեանդ Կենաց տասն թուղթ առաքեցի առ նա: Բայց թէ զորքանս կրեմ զաշխատութիւնս առ ի վերստին բաղդատել բուն լատինականի զհայերէնն, վերստին գրելով եւ յարմարելով, եւ զվկայութիւնս Աստուածաշնչին յարմարելով, զայն աշխատութիւնն Տէր ի փառս իւր համարեսցի, եւ այնու ինձ ողորմեսցի: Որ եւ աղօթիք երանուհւոյ Առաքին, որոյ եւ նուիրեցաւ այն գիրք, ինքն Աստուած բարեաւ եղերեսցէ: Քանզի այսու դիտաւորութեամբ էր, որ միայն զիս զլուին առաջնոյ հատորին փոխեցեալ ի տեղւոյն՝ եզի ի սկիզբն գրքոյն, եւ այլ ամենայն կարգն պահի որպէս եւ է բունն:

Նաեւ այսու առթիւ կարի լաւապէս ուսայ զգիր շինելն հայրով եւ մայրով. առաւել լաւագոյն քան զՄըսրըտամու գիրն. որ եւ շինեցի զմի տեսակ գիր՝ եւ ունիմ առ իս. նա եւ շինել տուեալ էի յառաջ զտեսակ իմն փոքր գրոյ, որպէս է այս տեսած բառարանիդ գիրն: Բայց խիստ կուսեղէ զիս տեղւոյս եղանակն, եւ օգոյն վատու-